

* *

Էս ջինջ աղբուրն է՝ ուրախ, քչքչնւն,
Վարդերի միջով ձորն՝ ի վար կ'երթայ.
—Ա՛խ, էս իմ եարն է՝ սիրուն, քչքչնւն,
Ուրիշ տղի հետ պսակի կ'երթայ...

—Դուն պսակ կ'երթաս ըու նոր եարի հետ,
Բարով վայելես, իմ աղիզ քուր ջան.
Ես էլ եար ունիմ հեռու տեղերում;
Նոր սիրուս հիմի, զուքուիմ, տես կ'երթամ:

Սե ձիս կը նստիմ ու սե գիշերին,
Ասպասու կապած՝ կ'երթամ եարիս ըով.
Իմ սէրս հիմի մէջ քոլին-չօլին
Ինձի կ'ըսպասէ սիրտը կարօտով:

Զան, փոթարանքն է իմ աղիզ հարսը,
Վիշապ-քամին *) է եարըս աննման.
Կ'երթամ սիրուելու, սիրելու էնոր,
Ու տաք գրկի մէջ մեռնելու կ'երթամ...

Էս իմ բարդիքն են, անուշ կը խշան,
Ու ձէնը կ'երթայ հեռու շատ հեռու.
Ա՛խ, շատ կը լսես էս ձէնը, մէր ջան,
Բայց բալիդ ձէնը էլ չես լսելու...

Կ'ընկնիմ չօլի մէջ՝ հեռու, անգիւման,
Աւազների մէջ, բարկ արևի տակ.
Ա՛խ, ձիս կը փորէ ինձի գերեզման
Ու ըուն կը մտնիմ դարդիս հետ մէնակ...

Ա.Ի. ԻՍՍ.ՀԱԿԵԱՆ

*) Վիշապ-քամին=ուրաղան: